ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅՈՒՄ

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի մագիստրոսի կրթական ծրագրով առկա ուսուցմամբ 2025-2026 ուսումնական տարվա ընդունելության 2–րդ փուլի փաստաթղթերն ընդունվում են **օգոստոսի 4-ից մինչև օգոստոսի 25-ը** (ներառյալ), ժամը 09:00-17:30:

Ընդունելության հարցազրույցն անցկացվելու է **օգոստոսի 27-ին**:

Պահանջվող փաստաթղթերը՝

- անձը հաստատող փաստաթղթի բնօրինակը և պատճեն,
- սոցքարտի բնօրինակը և պատճեն,
- բակալավրի, դիպլոմավորված մասնագետի, մագիստրոսի դիպլոմի և դրա հավելվածի (միջուկի) բնօրինակները և պատճենները,
- ինքնակենսագրություն,
- 4 լուսանկար (3×4 չափի),
- զինվորական ծառայության առնչության վերաբերյալ փաստաթղթի բնօրինակը և պատճեն (առկայության դեպքում),
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված հատուկ արտոնություններից օգտվելու մասին փաստաթղթերի բնօրինակները և պատճենները (I և II կարգի հաշմանդամության (նաև՝ զինվորական) վերաբերյալ տեղեկանք, մինչև 23 տարեկան երկկողմանի ծնողազուրկ, զոհված զինծառայողի մինչև 27 տարեկան զավակ, ծնող, ամուսին (կին) լինելու մասին փաստաթղթեր),
- Ընդունելության ծառայությունների համար գանձվող 5000 ՀՀ դրամի վճարման անդորրագիրը (ԱյԴի Բանկ, Հ/Հ 11817065324000):

Դիմում-հայտը լրացվում է ՀՖԿՍՊԻ–ի Մագիստրատուրայի և ասպիրանտուրայի բաժնում:

Հեռ.՝ +374 10 55 33 10 (164)

Էլ.հասցե՝ gayane.tamrazyan@sportedu.am